2-21

«ՀԱՄԿ(բ)Կ ՓԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԴԱՍԸՆԹԱՑԻ» ԼՈՒՅՍԸՆԾԱՑՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՊՐՈՊԱԳԱՆԴԱՅԻ ԴՐՎԱԾՔԻ ՄԱՍԻՆ»
ՀԱՄԿ(բ)Կ ԿԵՆՏԿՈՄԻ ՎՈՐՈՇՄԱՆ ՀԻՄԱՆ ՎՐԱ

# ԿՈՄՍՈՄՈԼՈՒՄ ՊՐՈՊԱԳԱՆԴԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաավելվածեմ Կենտկոմի վորոշումը

ՊԵՏՀՐԱՏ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ ● 1939

31 JAN 2018

«ՀԱՄԿ(Բ)Կ-Ի ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԴԱՍԸՆԹԱՑԻ» ԼՈՒՅՍԸՆԾԱՅՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՊՐՈՊԱԳԱՆԴԱՅԻ ԴՐՎԱԾՔԻ ՄԱՍԻՆ»
ՀԱՄԿ(Բ)Կ ԿԵՆՏԿՈՄԻ ՎՈՐՈՇՄԱՆ ՀԻՄԱՆ ՎՐԱ

# ԿՈՄՍՈՄՈԼՈՒՄ ՊՐՈՊԱԳԱՆԴԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համկցեմ կենտկոմի վորոշումը

ՊԵՏՀՐԱՏ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ • 1939

ՀԱՅԿՈՄԿՈՒՍԻ ԱՌԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
1-3774գր

# ОБ ОРГАНИЗАЦИИ ПРОПАГАНДЫ В КОМСОМОЛЕ

на основе постановления ЦК ВКП(б) «О постановке партийной пропаганды в связи с выпуском «Краткого курса истории ВКП(б)»

постановление

ЦК ВЛКСМ

Армгиз—Издательство политл. литературы,
Ереван, 1939

«Համկ(բ)կ պատմության համառոտ դասընթացի» լույսընծայումը խոշորագույն դեպք հանդիսացավ բոլշևիկյան կուսակցության և լենինյան–ստալինյան կոմսոմոլի գաղափարական կյանքում, ամբողջ խորհրդային ժողովրդի գաղափարական–քաղաքական կյանքում:

«Համկ(բ)կ պատմության համառոտ դասընթացը», որը ստեղծվել է ընկեր Ստալինի անմիջական մասնակցությամբ, հանդիսանում է բոլշևիզմի գաղափարական հզոր զենքը:

«Համկ(բ)կ պատմության ուսումնասիրումը հարստացնում է սոցիալիզմի համար մեր յերկրի բանվորների և գյուղացիների մղած պայքարի փորձով:

Համկ(բ)կ պատմության ուսումնասիրումը, մարքսիզմ–լենինիզմի բոլոր թշնամիների դեմ, աշխատավորների բոլոր թշնամիների դեմ մեր կուսակցության մղած պայքարի պատմության ուսումնասիրումն ոգնում է բոլշևիզմին տիրապետելու, բարձրացնում է քաղաքական զգոնությունը:

Բոլշևիկյան կուսակցության հերոսական պատմության ուսումնասիրումը զինում է հասարակական զարգացման և քաղաքական պայքարի որենքների ճանաչումով, հեղափոխության շարժիչ ուժերի ճանաչումով:

Համկ(բ)կ պատմության ուսումնասիրումն ամրացնում է հավատը դեպի Լենինի—Ստալինի կուսակցության մեծ գործի վերջնական հաղթանակը, դեպի

կոմունիզմի հաղթանակն ամբողջ աշխարհում»: («ՀամԿ(բ)Կ պատմության համառոտ դասընթաց»):

«ՀամԿ(բ)Կ պատմության համառոտ դասընթացը»—մարքսիզմ-լենինիզմի հիմնական դիտելիքների այդ ենցիկլոպեդիան— բացառիկ նշանակություն ունի կոմսոմոլի համար:

ՀամԼԿՅԵՄ-ը բոլշևիկյան կուսակցության մարտական ողնականն է, նրա ռեզերվը: Կոմսոմոլի խնդիրն է—կուսակցությանն ողնել յերիտասարդության կոմունիստական դաստիարակության գործում: Այս գլխավոր խնդրի լուծումը, վորի մասին կոմսոմոլին բազմիցս մատնանշել են կուսակցության առաջնորդներ Լենինը և Ստալինը, անհնարին է առանց՝ կոմսոմոլի պրակտիկ աշխատանքը մարքսիստական-լենինյան հաստատակամ ուսուցման հետ զուգակցելու:

ՀամԿ(բ)Կ Կենտկոմի վորոշումը՝ «Կուսակցական պրոպագանդայի դրվածքի մասին, «ՀամԿ(բ)Կ պատմության համառոտ դասընթացի» լույսընծայման կապակցությամբ», վորպիսի վորոշումը նոր շրջան է բաց անում կուսակցության գաղափարական կյանքում, հանդիսանում է կուսակցական պրոպագանդայի կազմակերպման մարտական ծրագիր՝ նաև կոմսոմոլում:

Այն թերությունները, վոր ՀամԿ(բ)Կ Կենտկոմը բացահայտել է այդ վորոշման մեջ, տարածված են նաև ՀամԼԿՅԵՄ կազմակերպություններում:

Մարքսիզմ-լենինիզմի պրոպագանդայի հիմնական թերությունը կոմսոմոլում այն է, վոր կազմակերպություններում ստեղծվում էին անթիվ քանակությամբ խմբակներ: Խմբակները հանդիսանում էին պրոպագանդայի հիմնական ձևը: Մարքսիզմ-լենինիզմին տիրապետելու գլխավոր մեթոդը—ինքնուրույն ուսուցումը—մոռացված էր: Խմբակներում բոլոր կոմսոմոլիստների «հարյուրտակոսային» ընդգրկման հետևից վազելով, ձեռքից բաց էին թողնում գլխավորը—մարքսիզմ-լենինիզմի պրոպագանդայի վորակը. աչքաթող էին անում կարևորագույն խնդիրը—մարքսիստական-լենինյան ուսուցման կազմակերպումը, կոմսոմոլի ղեկավար կադրերի գաղափարական զինումը: Խմբակների առատությունը հասցնում էր այն բանին, վոր պրոպագանդիստների կադրերը կոմսոմոլում դերլցվում էին թեորիապես անպատրաստ, իսկ յերբեմն էլ քաղաքականապես չստուգված մարդկանցով:

Միևնույն ժամանակ՝ կոմսոմոլի ղեկավար որգաններում մարքսիզմ-լենինիզմի պրոպագանդայի կազմակերպման ու ղեկավարման ապարատը փաստորեն լիկվիդացիայի յեր յենթարկվել:

Կոմսոմոլում ղեկավար ակտիվի զգալի մասի մեջ տարածված էր վնասակար ու սխալ արհամարհանքը հեղափոխական թեորիայի ուսումնասիրման նկատմամբ: Մասնավորապես դա արտացոլումն էր գտնում այն բանի մեջ, վոր շատ տեխնիկական բուհ-երում՝ մարքսիստական-լենինյան գիտության ուսումնասիրումը համարում էին յերկրորդական գործ: Կոմսոմոլի ղեկավար աշխատողների մի մասը հնարավոր էր գտնում կազմակերպությունը ղեկավարել, հույս դնելով սեփական փորձի վրա: Ընդսմին չէին հասկանում, վոր այդ փորձը, առաջին՝ հաճախ ծայրահեղորեն աննշան է, իսկ յերկրորդ՝ այն դառնում է կույր, յեթե չի լուսավորվում հեղափոխական թեորիայով:

Այս բոլոր թերությունները սաստկանում էին նրանով, վոր ժողովրդի թշնամիները, վորոնք զոր-

ծում էին ՀԱՄԼԿՑԵՄ Կենտկոմում և կոմսոմոլի մի-քանի տեղական կազմակերպություններում, փորձում էին արմատացնել մեր կադրերի թեորիական հետամնացությունը, վերացնել յերիտասարդության կոմունիստական դաստիարակությունը: Ոգտվելով այդպիսի պրիսմից, թշնամիներին հաջողվում էր իրենց ցանցի մեջ քաշել վորոշ կադրերի, այդ թվում և կոմսոմոլի կադրերի, հենց չնորհիվ այդ կադրերի թեորիական ու քաղաքական հետամնացության:

ՀԱՄԿ(բ)Կ Կենտկոմի պատմական վորոշումը մատնանշում է, վոր «ՀԱՄԿ(բ)Կ պատմության համառոտ դասընթացն» ուղղված է առաջին հերթին կուսակցական, կոմսոմոլի, տնտեսական և այլ աշխատողների ղեկավար կադրերին, մեր ամբողջ կուսակցական և անկուսակցական ինտելիգենցիային՝ ինչպես քաղաքում, այնպես և գյուղում»: Այդ պարտավորեցնում է առաջին հերթին կոմսոմոլի ղեկավար կադրերին՝ ձեռնամուխ լինել իրենց թեորիական ու քաղաքական հետամնացության վերացմանը: Սակայն կոմսոմոլի շատ ղեկավար աշխատողներ սխալ հասկացան այդ վորոշումից բղխող իրենց խնդիրները:

Փոխանակ ՀԱՄԿ(բ)Կ պատմության ուսումնասիրման համար կազմակերպելու նախ և առաջ ղեկավար կադրերին, կոմսոմոլի մի քանի կոմիտեներ փորձում են առաջվա պես «ընդգրկել» բոլոր կոմսոմոլիստներին:

Փոխանակ լայնորեն հանրամատչելի դարձնելու դրքի վրա ինքնուրույն կերպով աշխատելու մեթոդը, վորը ստուգված է բոլշևիկների ավագ սերնդի փորձով, փորձում են պահպանել խմբակները, վորպես քաղաքական կրթության գլխավոր ձև:



Փոխանակ ողնություն կազմակերպելու կուսակցության պատմությունն ինքնուրույն կերպով ուսումնասիրողների համար, սկսեցին հնարել վերահսկողության և դիտելիքները «քննությունների», «ինքնահաշվետվությունների» ու այլ միջոցներով ստուգելու բյուրոկրատական ձևեր:

Փոխանակ անձնական օրինակ ցույց տալու մարքսիստական-լենինյան թեորիայի ուսումնասիրման գործում, կոմսոմոլի շատ ղեկավար աշխատողներ զբաղվում են մեծադղորդ ճառեր արտասանել ՀԱՄ.Կ(բ)Կ պատմությունն ուսումնասիրելու անհրաժեշտության մասին, իսկ իրենք առաջվա պես մնում են թեորիապես հետամնաց:

Կոմսոմոլի շարքերում կա իր բոլոր արմատներով բանվոր դասակարգի և գյուղացիության հետ կապված հարյուր-հազարավոր յերիտասարդ խորհրդային ինտելիգենցիա, վորը կատարում է խորհրդային պետության համար մեծ նշանակություն ունեցող հսկայական ստեղծագործական աշխատանք: Հետագայում ինտելիգենցիայի դերը կաճի, վորովհետև կոմունիստական հասարակության հիմնական հատկանիշներից մեկն է մտավոր և ֆիզիկական աշխատանքի միջև յեղած հակադրության վերացումը: Հետևաբար, հեռանկարում խնդիրն այն է, վոր բոլոր բանվորներին ու գյուղացիներին դարձնենք ինտելիգենտներ:

Կոմսոմոլի կազմակերպությունների ուղղակի պարտականությունն է—ապահովել յերիտասարդ խորհրդային ինտելիգենցիայի կադրերի դաստիարակությունը-քաղաքական աճումը, ողնել նրան մարքսիզմ-լենինիզմին տիրապետելու գործում, բարձրացնել հեղափոխական զգաստությունը:

Մինչդեռ կոմսոմոլում մինչև այժմ կան դեպի ինտելիգենցիան սխալ, կուսակցության կողմից դատապարտված վերաբերմունքի փաստեր: Կոմսոմոլի մեջ կան ոգեներ, որոնք դառողանալով իրենց անկրթությամբ, արհամարհանքով են վերաբերվում դեպի ինտելիգենցիան՝ որպես «յերկրորդ տեսակի», բանվորներից ու գյուղացիներից կտրված մարդկանց: Այդպիսի վայրենի խուլիգանական վերաբերմունքը դեպի մեր ինտելիգենցիան վնասակար և վտանգավոր է պետության համար:

Անհրաժեշտ է, որ կոմսոմոլի կազմակերպությունները վճռականորեն փոխեն վերաբերմունքը դեպի խորհրդային ինտելիգենցիայի կադրերը, իրենց ուշադրությունը շրջեն դեպի նա: Պետք է ավելի լայնորեն ծավալել զաղափարական-քաղաքական և կազմակերպական աշխատանքը յերիտասարդ ուսուցիչների, ինժեներների, բժիշկների, տեխնիկների, գիտության ու արվեստի աշխատողների մեջ, ուսանողների մեջ:

Կոմունիզմի հաղթանակի համար մղվող պայքարը պահանջում է այնպիսի կադրեր, որոնք կատարելապես տիրապետած լինեն ոչ միայն հատուկ գիտելիքներին, այլև առաջավոր հեղափոխական թեորիային, որովհետև միայն նա յե տալիս ուժ և վստահություն Լենինի—Ստալինի գործի հաղթանակի վերաբերմամբ, զաղափարապես կռվում և զինում է ժողովրդի թշնամիների դեմ անողոք պայքարի համար:

Պետք է կոմսոմոլի ղեկավար ակտիվի մեջ վերականգնել հավատը դեպի սեփական ուժերը, հեղափոխական գիտությանն ինքնուրույն կերպով տիրապետելու հնարավորությունը:



Պետք է պարզաբանել կոմսոմոլի ղեկավար կադրերին, որ հեղափոխական գիտությանը տիրապետելը ձեռքերովի բան է:

«Հենց այժմ, խորհրդային իշխանության և ԽՍՀՄ-ում սոցիալիզմի հաղթանակի որով, ստեղծված են անսահմանափակ հնարավորություններ, որպեսզի մեր ղեկավար կադրերը հաջողությամբ տիրապետեն մարքսիստական-լենինյան թեորիային, ուսումնասիրեն կուսակցության պատմությունը, Մարքսի, Ենգելսի, Լենինի, Ստալինի աշխատությունները: Մարքսիզմ-լենինիզմի թեորիային տիրապետելու համար հարկավոր է միայն յերևան բերել ցանկություն, հաստատակամություն և բնավորության ամրություն այդ նպատակին հասնելու գործում: Ցեթե կարելի յե հաջողությամբ տիրապետել այնպիսի գիտություններին, ինչպես, օրինակ, ֆիզիկան, քիմիան, կենսաբանությունը, ապա առավել ևս հիմք չկա տարակուսելու, որ կարելի յե լիովին տիրապետել մարքսիզմ-լենինիզմի գիտությանը»:

## ՀԱՄԼԿՑԵՄ ԿԵՆՏԿՈՄԸ ՎՈՐՈՇՈՒՄԵ·

1· Կոմսոմոլում մարքսիզմ-լենինիզմի պրոպագանդայի հիմքում դնել «Համամիութենական Կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության պատմության համառոտ դասընթացի» ուսումնասիրությունը:

2· Պարզաբանել կոմսոմոլիստներին և առաջին հերթին կոմսոմոլի ղեկավար կադրերին, որ մարքսիզմ-լենինիզմին տիրապետելու հիմնական ու գլխավոր մեթոդը հեղափոխական թեորիայի ինքնուրույն ուսումնասիրման մեթոդն է:

3· Համկ(բ)կ պատմության ուսումնասիրումն

անցկացնել այն յերեք ողակներին համապատասխան, վորոնք սահմանված են Համկ(բ)կ Կենտկոմի վորոշմամբ։—

«Կադրերի ստորին ողակի համար, վորոնց թվում կա վոչ բավականաչափ պատրաստված ընկերների զգալի մաս, նպատակահարմար է դասընթացն ուսումնասիրել կրճատ ծավալով՝ ըստ կուսակցության պատմության յերեք հիմնական ետապների։ 1) պայքար բոլշևիկյան կուսակցություն ստեղծելու համար (I—IV գլուխներ), 2) բոլշևիկների կուսակցությունը պրոլետարիատի դիկտատուրայի համար մղված պայքարում (V—VII գլուխներ), 3) բոլշևիկների կուսակցությունն իշխանության գլուխ (VIII—XII գլուխներ)։

Միջին ողակի համար, վորը բաղկացած է համեմատաբար ավելի պատրաստված ընկերներից և հանդիսանում է մեր կադրերի առավել բազմաթիվ ողակը, Համկ(բ)կ Կենտկոմը հանձնարարում է «Համկ(բ)կ պատմության դասընթացն» ուսումնասիրել լիովին, ըստ նրա պարունակած 12 գլուխների։

Բարձր ողակի համար, այսինքն ամենից ավելի պատրաստված ընկերների համար, նպատակահարմար է «Համկ(բ)կ պատմության համառոտ դասընթացն» ուսումնասիրել ըստ յուրաքանչյուր գլխի յենթաբաժինների, միաժամանակ ուսումնասիրելով Մարքս—Ենգելս—Լենինի—Ստալինի համապատասխան յերկերը՝ սկզբնաղբյուրներով»։

4. Կրճատել խմբակների քանակը կոմսոմոլում։ Խմբակներ ստեղծել պրոպագանդիստական վորակյալ կադրերի առկայության դեպքում միայն, խմբակների այն յերեք տիպերին համապատասխան, վորոնք սահմանված են Համկ(բ)կ Կենտկոմի վորոշմամբ։



Խմբակները կոմպլեկտավորելիս հաշվի առնել խմբակներին մասնակցողների հանրակրթական և քաղաքական մակարդակը։ Խմբակների աշխատանքը պետք է կառուցված լինի կենդանի զրույցի և ընկերական դիսկուսիայի հիման վրա։

5. Հանձնարարել կոմսոմոլի կազմակերպություններին՝ Համկ(բ)կ պատմությունն ուսումնասիրողներին ողնելու նպատակով կազմակերպել դասախոսություններ, զեկուցումներ, կոնսուլտացիաներ կուսակցության պատմության դասընթացի, մարքսիզմ-լենինիզմի առանձին յերկերի ու պրոբլեմների վերաբերյալ։ Կիրառել նաև ԽՍՀՄ-ի միջազգային ու ներքին քաղաքականության, մեր հայրենիքի պատմության և այլ հարցերի վերաբերյալ դասախոսությունների պրակտիկան։ Հանձնարարել կոմսոմոլի կազմակերպություններին՝ թեորիական կոնֆերանսների անցկացումը, ռեֆերատների ու զեկուցումների քննարկումը։ Թեորիական կոնֆերանսները պետք է կրեն ընկերական դիսկուսիայի, առաջադրված հարցերի կենդանի ու ակտիվ քննարկման բնույթ։

6. Բաղկոմներին, մարզկոմներին, յերկրկոմներին և ազգային հանրապետությունների ԼԿՑԵՄ Կենտկոմներին կից, նայած բարձրորակ պրոպագանդիստների առկայությանը, ստեղծել լեկտորական խմբեր։ Բաղկոմներին, քաղաքային խոշոր ռայկոմներին կից ստեղծել կոնսուլտանտների խմբեր լավագույն պրոպագանդիստների թվից, ապահովելով մշտական կոնսուլտացիան խոշորագույն ձեռնարկություններում, հիմնարկներում, բուհ-երում։

Պարտավորեցնել կոմսոմոլի կոմիտեներին՝ լեկտորների, պրոպագանդիստների և կոնսուլտանտների

կադրերը ներկայացնել համապատասխան կուսակցական կոմիտեների հաստատմանը:

7· Աննպատակահարմար համարել կոմսոմոլի կոմիտեներին կից պրոպագանդիստների ինքնուրույն սեմինարների գոյությունը և խնդրել Համկ(բ)կ Կենտկոմին՝ ցուցում տալ այդ աշխատանքը Համկ(բ)կ շրջկոմներին, քաղկոմներին, մարզկոմներին և յերկրկոմներին կից սեմինարներում կենտրոնացնելու մասին:

8· Խնդրել Համկ(բ)կ Կենտկոմին՝ կոմսոմոլում աշխատող պրոպագանդիստների և լրագրային աշխատողների պատրաստումն ու վերապատրաստումը կենտրոնացնել պրոպագանդիստների և լրագրային աշխատողների կուսակցական միամյա դասընթացներին կից, հետևյալ կենտրոններում՝ Մոսկվա, Լենինգրադ, Կիև, Մինսկ, Ռոստով, Թբիլիսի, Բաքու, Տաշքենտ, Ալմա-Ատա, Նովոսիբիրսկ:

9· Պարտավորեցնել մարզկոմներին, յերկրկոմներին և ազգային հանրապետությունների կոմսոմոլի Կենտկոմներին՝ մեկ ամսվա ընթացքում գյուղական շրջկոմներում մշտական աշխատանքի ուղարկել վորակյալ պրոպագանդիստական կադրեր՝ քաղաքի լավագույն պրոպագանդիստների թվից:

10· Սխալ համարել, յերբ կոմսոմոլի ղեկավար կոմիտեներն իրենց հեռու յեն պահում բուհ-երում դաստիարակական-քաղաքական աշխատանքի ղեկավարումից, պայքար չեն մղում սոցիալ-տնտեսական դիսցիպլինների ուսումնասիրման թերագնահատության դեմ:

Պարզաբանել բուհ-երի բոլոր կոմսոմոլի կազմակերպություններին, վոր պայքարը մարքսիզմ-լենինիզմի խոր ուսումնասիրման համար՝ հանդիսանում է խորհրդային ինտելիգենցիայի լիարժեք կադրերի պատրաստման անհրաժեշտ պայմանը: Առաջարկել բոլոր քաղկոմներին, մարզկոմներին, յերկրկոմներին, ազգային հանրապետությունների կոմսոմոլի Կենտկոմներին՝ վճռականորեն վտխել ուսանողների մեջ կատարվող դաստիարակական-քաղաքական աշխատանքի ղեկավարումը, անխնա մերկացնել և արմատից կտրել դեպի ինտելիգենցիան խուլիգանական, արհամարհական վերաբերմունքի բոլոր փորձերը:

11· Մարքսիզմ-լենինիզմի խոր յուրացումը պահանջում է հանրակրթական բարձր պատրաստություն, պահանջում է իմանալ ընդհանուր պատմությունը և ԽՍՀՄ-ի ժողովուրդների պատմությունը:

Այն դիտելիքները, վոր սովորողները ձեռք են բերում միջնակարգ դպրոցում, պետք է ամուր հիմք հանդիսանան հետագայում նրանցով մարքսիստական-լենինյան դիտությանը տիրապետելու համար:

Առաջարկել միջնակարգ դպրոցների կոմսոմոլի կազմակերպություններին՝ ավելի մեծ ուշադրություն դարձնել պատմական դիտությունների ուսումնասիրմանը սովորողների կողմից: Կիրառել պատմական թեմաների վերաբերյալ դասախոսությունների, զեկուցումների պրակտիկան, առանձին պատմական վիպակների, վեպերի քննարկումը, յերեկոների կազմակերպումը, բոլշևիկյան կուսակցության հերոսական պատմության, նրա աչքի ընկնող գործիչների մասին զրույցների կազմակերպումը:

12· Աճող սերնդի կոմունիստական դաստիարակության պատվավոր խնդրի կատարման մեջ վճռական դեր և խաղում ուսուցչությունը, վորը կազմում է

խորհրդային ինտելիգենցիայի ամենաբազմամարդ ջոկատներից մեկը:

Առաջարկել կոմսոմոլի կազմակերպություններին՝ սմեն կերպ ոգնություն ցույց տալ ուսուցիչներին նրանց դաղափարական-քաղաքական մակարդակի բարձրացման գործում, կիրառել կուսակցության պատմության և ընթացիկ քաղաքականության հարցերի վերաբերյալ նրանց համար հատուկ դասախոսություններ ու դրույցների կազմակերպման պրակտիկան, ամենորյա ոգնություն ցույց տալ ՀամԿ(բ)Կ պատմությունն ինքնուրույն կերպով ուսումնասիրելու գործում, ավելի համարձակորեն ներդրավել կոմսոմոլի ակտիվ աշխատանքի մեջ:

13. Այն կոմսոմոլիստների համար, որոնք չունեն բավականաչափ քաղաքական ու հանրակրթական գիտելիքներ, պատրաստված չեն ՀամԿ(բ)Կ պատմությունն ուսումնասիրելու համար, կազմակերպել քաղդրաքիությունի ուսումնասիրումն ինչպես խմբակներում, նույնպես և ինքնուրույն կերպով:

Ընկերների այդ խմբի համար հանձնարարել ԽՍՀՄ Սահմանադրության, «Մեր հայրենիքը», «ԽՍՀՄ-ը և կապիտալիզմի յերկրները» դրքերի ուսումնասիրումը, միջազգային և ներքին քաղաքականության հարցերի վերաբերյալ զեկուցումների, դրույցների կազմակերպումը:

14. Ամեն կերպ ոգնություն ցույց տալ դրադարաններին, խրճիթ-ընթերցարաններին՝ նրանց դրականությամբ կոմպլեկտավորելու գործում, վորակյալ աշխատողների ընտրության և դրքի վրա յերիտասարդության կատարելիք աշխատանքի համար անհրաժեշտ պայմանների ստեղծման գործում: Դրադարաններում և



ընթերցարաններում լայնորեն պրոպագանդա անել լրագրերում և ժուռնալներում հրապարակվող թեորիական հոդվածները, հարցերի պատասխանները և այլ նյութերը, վորոնք ոգնում են ՀամԿ(բ)Կ պատմության ուսումնասիրմանը:

15. Լիկվիդացիայի յենթարկել կոմսոմոլի մամուլի՝ վորպես մարքսիզմ-լենինիզմի պրոպագանդայի կարևորագույն միջոցի՝ նշանակության թերագնահատումը: Այդ թերագնահատումը լուրջ վնաս հասցրեց զեկավար կադրերի դաղափարական դաստիարակության գործին:

Կոմսոմոլի մամուլի կարևորագույն խնդիրը համարել—«ՀամԿ(բ)Կ պատմության համառոտ դասընթացն» ուսումնասիրողներին ոգնություն ցույց տալը: ՀամԿ(բ)Կ Կենտկոմի վորոշմանը համապատասխան, պարտավորեցնել «Комсомольская Правда» թերթի խմբագրությանը, ինչպես նաև կոմսոմոլի հանրապետական, յերկրամասային ու մարզային թերթերի խմբագրություններին՝ սիստեմատիկաբար զետեղել մարքսիզմ-լենինիզմի հարցերի վերաբերյալ հոդվածներ, կոնսուլտացիաներ, լավագույն պրոպագանդիստների դասախոսություններ, ընթերցողների հարցերի պատասխաններ, անհասկանալի բառերի բացատրություններ, այդ նպատակի համար ներդրավելով թեորիապես պատրաստված, քաղաքականապես ստուգված կադրերին: Լայնորեն լուսաբանել կուսակցության պատմության ինքնուրույն ուսումնասիրման դրական փորձը, ցույց տալ լավագույն խմբակների, սեմինարների, կոնսուլտացիաների աշխատանքը:

Առաջարկել կոմսոմոլի հանրապետական, յերկրային ու մարզային թերթերին՝ «Պրավդա»-յից, «Կոմ-

սոմոլսկայա Պրավդա»-յից, «Կրասնայա Զվեզդա»-յից արտատպել լավագույն թեորիական հոդվածները:

16. Հանձնարարել քաղկոմներին, ոկրուգկոմներին, մարզկոմներին, յերկրկոմներին և ազգային հանրապետությունների կոմսոմոլի Կենտկոմներին՝ կերառել պրոպագանդիստների և կոմսոմոլի մասուլի աշխատողների ժողովների պարբերական հրավիրման պրակտիկան՝ պրոպագանդայի հիմնական հարցերի քննարկման և փորձի փոխանակման համար:

17. Վերակառուցել ՀամԼԿՅԵՄ Կենտկոմի «Молодая гвардия» հրատարակչության և ազգային հանրապետությունների ԼԿՅԵՄ Կենտկոմների հրատարակչությունների աշխատանքը, ավելացնելով պրոպագանդիստական և մասսայական-քաղաքական դրականության լույսընծայումը՝ պրոպագանդիստներին և կուսակցության պատմությունն ուսումնասիրող կոմսոմոլի ակտիվին ոգնելու նպատակով:

18. ՀամԼԿՅԵՄ Կենտկոմի «Ցունիյ կոմունիստ» և «Կոմսոմոլսկի պրոպագանդիստ ի ագիտատոր» ժուռնալների բազայի վրա ստեղծել ՀամԼԿՅԵՄ Կենտկոմի հասարակական-քաղաքական և հանրամատչելի թեորիական նոր ժուռնալ՝ իբրև ոգնություն կոմսոմոլի ղեկավար ակտիվին, յերիտասարդ ինտելիգենցիային, պրոպագանդիստներին և ագիտատորներին: Ժուռնալի հիմնական նպատակը պետք է լինի կոնսուլտացիան մարքսիզմ-լենինիզմի հարցերի վերաբերյալ:

19. Պարտավորեցնել «Ինտերնացիոնալ մոլոդյոժի», «Սովետսկոյե ստուդենչեստվո» ժուռնալների խմբագրություններին՝ իրենց եջերում սիստեմատիկաբար նյութեր զետեղել իբրև ոգնություն ՀամԿ(բ)Կ պատմությունն ուսումնասիրողներին:

20. Մարքսիզմ-լենինիզմի պրոպագանդայի ղեկավարումն արմատապես բարելավելու նպատակով վերականգնել կոմսոմոլի կազմակերպություններում պրոպագանդայի և ագիտացիայի ղեկավարման ապարատը, սկսած ՀամԼԿՅԵՄ Կենտկոմից:

ՀամԼԿՅԵՄ Կենտկոմում, ազգային հանրապետությունների ԼԿՅԵՄ Կենտկոմներում, յերկրկոմներում, մարզկոմներում, ոկրուգկոմներում ստեղծել պրոպագանդայի և ագիտացիայի բաժիններ:

Պրոպագանդայի և ագիտացիայի բաժինների ղեկավարումը դնել թվարկված կոմիտեների քարտուղարներից մեկի վրա:

Կոմսոմոլի քաղկոմներում և շրջկոմներում վերակառուցել քաղուսուցման բաժինները՝ դրանք վերածելով պրոպագանդայի և ագիտացիայի բաժինների:

Հանձնարարել ՀամԼԿՅԵՄ Կենտկոմի պրոպագանդայի և ագիտացիայի բաժնին՝ 10 որվա ընթացքում ՀամԼԿՅԵՄ Կենտկոմի Բյուրոյի հաստատմանը ներկայացնել առաջարկներ պրոպագանդայի և ագիտացիայի բաժինների կառուցվածքի մասին:

21. Պրոպագանդայի և ագիտացիայի բաժիններում կենտրոնացնել մարքսիզմ-լենինիզմի տպագիր ու բանավոր պրոպագանդայի, ինչպես նաև մասսայական-քաղաքական ագիտացիայի ղեկավարման ամբողջ աշխատանքը—կոմսոմոլի մամուլ, պրոպագանդիստական և ագիտացիոն դրականության հրատարակում, մարքսիզմ-լենինիզմի տպագիր և բանավոր պրոպագանդայի կազմակերպում, վերահսկողություն պրոպագանդիստական աշխատանքի դաղափարական բովանդակու-

1-37749





ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱՐ

թյան նկատմամբ, պրոպագանդիստական կադրերի ընտրություն և բաշխում, պրոպագանդիստների կադրերի պատրաստման ու վերապատրաստման կազմակերպում, յերիտասարդության մեջ մասսայական-քաղաքական ագիտացիայի կազմակերպում:

Պրոպագանդայի և ագիտացիայի բաժինների հիմնական խնդիրն է պրոպագանդայի մասին Համկ(բ)Կ Կենտկոմի վորոշման և ՀամԼԿՅԵՄ Կենտկոմի այս վորոշման պրակտիկ կենսագործումը:

22. Պրոպագանդայի և ագիտացիայի բաժինների աշխատողները պետք է ջոկվեն լավագույն պրոպագանդիստների, մարքսիստորեն կրթված և քաղաքականապես ստուգված ընկերների թվից:

Սահմանել, վոր քաղկոմների, ոկրուգկոմների, մարզկոմների, յերկրկոմների և ազգային հանրապետությունների ԼԿՅԵՄ Կենտկոմների պրոպագանդայի և ագիտացիայի բաժինների վարիչները հաստատվում են ՀամԼԿՅԵՄ Կենտկոմի կողմից, իսկ շրջկոմների պրոպագանդայի և ագիտացիայի բաժինների վարիչները հաստատվում են ՀամԼԿՅԵՄ Կենտկոմի կողմից՝ մարզկոմների, յերկրկոմների և ազգային հանրապետությունների ԼԿՅԵՄ Կենտկոմների բյուրոների առաջադրությամբ:

Շրջկոմների, քաղկոմների, ոկրուգկոմների, մարզկոմների, յերկրկոմների և ազգային հանրապետությունների ԼԿՅԵՄ Կենտկոմների պրոպագանդայի և ագիտացիայի բաժինների մնացած բոլոր պատասխանատու աշխատողները հաստատվում են մարզկոմների, յերկրկոմների և ազգային հանրապետությունների ԼԿՅԵՄ Կենտկոմների բյուրոների կողմից:



* * *

Կոմսոմոլը կոչված է բոլշևիկյան կուսակցությանն ողնելու՝ յերիտասարդ սերնդին կոմունիզմի վոգով դաստիարակելու գործում: Իր այս պարտականությունը կատարել նա կարող է առաջավոր հեղափոխական թեորիայով—մարքսիզմ-լենինիզմով իրեն զինելով միայն:

Կոմսոմոլի ղեկավար կադրերը պետք է յուրացնեն, վոր «...առանց կոմյերիտական ակտիվի պրակտիկ աշխատանքը նրա թեորիական պատրաստության հետ («լենինիզմի ուսումնասիրումը») զուգակցելու, անհնարին է վորևե փոքրիշատե իմաստավորված կոմունիստական աշխատանք կոմսոմոլում...

... Լենինիզմի ուսումնասիրումը, լենինյան ուսուցումը ներկայիս կոմսոմոլի ակտիվն իսկական լենինյան ակտիվ դարձնելու ամենաանհրաժեշտ պայմանն է հանդիսանում» (Ստալին):

Մեր հայրենիքի յերիտասարդ սերունդը դաստիարակելով բոլշևիկյան կուսակցության պանծալի մարտական տրադիցիաներով, Լենինյան-Ստալինյան կոմսոմոլը դաղափարապես ե՛լ ավելի ուժեղ կերպով կկոփի իր կադրերը՝ ժողովրդի թշնամիների դեմ վճռական պայքար մղելու համար և ե՛լ ավելի սերտորեն կհամախմբվի իր մոր—Համամիութենական Կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության ու խորհրդային յերիտասարդության մեծ առաջնորդ և ուսուցիչ ընկեր Ստալինի շուրջը:

Հայբեռն թաքսմանության խմբագիր Ս. Միքայելյան
Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան
Սրբագրիչ Հ. Մանվելյան
Գոնաբալ սրբագրիչ Լ. Սրուվյան

Գլավլիտի լիազոր № Ն—2833, հրատ. № 633,
Գատվեր № 74, տիրաժ 7000
Թղթի չափը 59×83 1¼ (51.200 տպ. նիշ 1 տպ. մամուլում) 1¼ տպ. մամուլ, ⅝ թերթ թուղթ.
Հանձնված է արտադրության 7/IV 1939 թ.
Ստորագրված է տպագրելու 23/IV 1939 թ.
Գինը 25 կ.

Գեղարատ—Քաղաքական գրականության հրատարակչության տպարան,
Երևան, Ալավերդյան № 65

ՀՀ Ազգային գրադարան
NL0936750

15 ИЮН. 1939
298
ԳԻՐՔ 25 Կ.
1
3774

# ОБ ОРГАНИЗАЦИИ ПРОПАГАНДЫ В КОМСОМОЛЕ

на основе постановления ЦК ВКП(б) «О постановке партийной пропаганды в связи с выпуском «Краткого курса истории ВКП(б)»

Постановление ЦК ВЛКСМ

Армгиз—Издательство полит. литературы,
Ереван, 1939